**«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՌԿԱ "АЛЬФАЦЕНТР" ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀԿ-ԳՀԾՁԲ-25/03**

ք. Երևան «26» 11 2025թ.

**«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ**, **ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Հարությունյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Պրոսերվինժեներինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս․Կարապետյանի**,, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **առկա "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման արտոնագրերի համար նախատեսված տարեկան տեխնիկական աջակցության** ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>3</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5 950 000 (հինգ միլիոն ինը հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ):**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[9] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:[10]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[9] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[10] *Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումը, ապա պայմանագրի նախագծը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 5.5.1 կետով. «5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.*
*…» իսկ 5.4 կետում «5.2 և 5.3 » թվերը փոխարինվում են «5.2,5.3 և 5.5.1» թվերով:*

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի

(այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը[11]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| «Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ | «Պրոսերվինժեներինգ» ՍՊԸ |
| ք. Երևան, Աբովյան փող. 2. 27 | ք. Երևան, Շերամի փող. 2. 1, բն. 3 |
| ՀՎՀՀ 01544167 | ՀՎՀՀ 01305127 |
| «Կոնվերս բանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1930000600150100 | Հ/Հ 2050422362451001 |
| Ն. Հարությունյան ------------------------------ (ստորագրություն) | Ս. Կարապետյան ------------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[11] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

**Հավելված N 1**

*« 26 » 11 2025 թ. կնքված*
*ՀԿ-ԳՀԾՁԲ-25/03 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 72261160 | Ներկայացված է Հավելված N 1.1–ով, կցված է | հատ | 5950000 | 1 | ք. Երևան, Աբովյան 27, 3-րդ հարկ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 27
ՀՎՀՀ 01544167
“Կոնվերս բանկ” ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100

Ն. Հարությունյան ----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոսերվինժեներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Շերամի փող շ. 1, բն. 3
ՀՎՀՀ 01305127
“Ինեկո բանկ” ՓԲԸ
Հ/Հ 2050422362451001

Ս. Կարապետյան ----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված N 1.1**

*«26» 11 2025 թ. կնքված*
*ՀԿ-ԳՀԾՁԲ-25/03 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

**Տարեկան տեխնիկական աջակցության ձեռքբերման «Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ – ում օգտագործվող "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման արտոնագրերի համար**

1. Տարեկան տեխնիկական աջակցություն ձեռք է բերվում "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման հետևյալ գործող արտոնագրերի համար՝

- HASP - բանալի 287-UE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – անսահմանափակ /
- HASP – բանալի 281- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 241- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 206- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 212- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 270- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 211- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 268- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /
- HASP – բանալի 11442- SE / հաշվիչների քանակը – 10000 հատ; օգտագործողների քանակը – 5 հոգի /

2. / 1. / կետում նշված բոլոր 6 արտոնագրերի տեխնիկական աջակցությունը իրականացվելու է ներկայում գործող ORACLE բազաների կառավարման համակարգի համար:

3. / 1. / կետում նշված տարեկան տեխնիկական աջակցությունների ձեռք բերման արդյունքում երաշխավորվում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ում գործող "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման բոլոր օժանդակ ծրագրերի և լրացուցիչ մոդուլների թարմացումների և տեխնիկական աջակցության հասանելիությունը. դրանք են՝

- Լրացուցիչ կոմունիկացիոն սերվեր / HASP – բանալի 245 /
- AC _ M Monitoring / տվյալների մոնիտորինգի լրացուցիչ մոդուլ /
- AC _ Генератор отчётов / հաշվետվությունների ձևավորման լրացուցիչ մոդուլ /
- AC _ WEB /տվյալների դիտարկման առցանց հարթակի հասանելիության լրացուցիչ մոդուլ /
- AC _ Диспетчер заданий / առաջադրանքների ավտոմատ կառավարման լրացուցիչ մոդուլ /

4. Տարեկան տեխնիկական աջակցության ձեռք բերման արդյունքում պատվիրատուի համար պետք է ապահովվի հասանելիություն առցանց հարթակին, որի միջոցով 24/7/365 ռեժիմով հնարավոր կլինի ծանոթանալ "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման փաթեթի փոփոխություններին, տեղեկանալ ծրագրերի թարմացումների մասին, ներբեռնել անհրաժեշտ ծրագրերը, դիմել մասնագետին տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն ստանալու համար:

5. Տարեկան տեխնիկական աջակցություն իրականացնող կազմակերպությունը պետք է տրամադրի հետևյալ մեթոդները տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն ստանալու համար.

- Ինտերնետ հարթակում խորհրդատվություն ստանալու համար դիմումներ ներկայացնելու ծառայություն՝ 24/7/365 ռեժիմով;
- էլեկտրոնային փոստով նամակագրության հնարավորություն (անհատապես նշված հասցեով), հասցեն պետք է որոշվի պայմանագրի կնքման ընթացքում.
- էլեկտրոնային մեսենջերի միջոցով (աուդիո զանգ և չաթ) շփվելու հնարավորություն:

6. Արտակարգ իրավիճակների դեպքում, որոնք անհնարին են դարձնում ծրագրաշարի շահագործումը, տարեկան տեխնիկական աջակցություն իրականացնող

կազմակերպությունը պետք է սկսի վերլուծել և վերացնել դրանք անմիջապես՝ (ներառյալ հանգստյան օրերը) պատվիրատուի ծանուցումը ստանալու պահից:

7. Տեխնիկական աջակցություն իրականացնող կազմակերպությունը խորհրդատվություն է տրամադրում պատվիրատուի մասնագետներին ծրագրի շահագործման վերաբերյալ, ներառյալ.

- Ծրագրի պարամետրերի և հարակից կիրառական ծրագրերի օպտիմալ կազմաձևման հարցերի վերաբերյալ
- Ծրագրի ընթացիկ տարբերակի տեղադրման վերաբերյալ
- Սարքավորումների և համակարգի ծրագրային ապահովման օպտիմալ կազմաձևման ընտրության վերաբերյալ
- Անհրաժեշտության դեպքում կազմակերպում է աշխատակիցների ուսուցում

8. Տեխնիկական աջակցություն իրականացնող կազմակերպությունը, անհրաժեշտության դեպքում, տրամադրում է խորհրդատվություն պատվիրատուի մասնագետներին ORACLE բազաների կառավարման նոր տարբերակի ձեռք բերման, տեղադրման և "АльфаЦЕНТР" ծրագրերին դրա ներդաշնակեցման գործընթացն իրականացնելու համար:

9. Տարեկան տեխնիկական աջակցության ձեռք բերման դեպքում կատարողի կողմից պետք է երաշխավորվի հասանելիություն մինչ այժմ գործող https://www.alphacnt.ru/ կայքին՝ անկախ այն հանգամանքից՝ առցանց հարթակի փոփոխություն նախատեսվում է թե ոչ:

10. Տարեկան տեխնիկական աջակցություն իրականացնող կազմակերպության մասնագետները կարող են մուտք գործել "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման համակարգ կամ դրանում կատարել որևէ փոփոխություն միայն նախապես ստանալով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ «Էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի» բաժնի պետի կամ գլխավոր մասնագետի համաձայնությունը:

11. "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման համակարգում կատարվելիք ցանկացած փոփոխության կամ կարգաբերման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը որոշում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ «Էլեկտրաէներգիայի հաշվառման ավտոմատացված համակարգի» բաժնի պետը:

12. Տարեկան տեխնիկական աջակցություն իրականացնող կազմակերպությանը հայտնի դարձած ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերվում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ տվյալների բազային կամ "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման

համակարգ մուտքի թույլտվության պարամետրերին, համարվում է կոմերցիոն գաղտնիք և ենթակա չէ հրապարակման կամ փոխանցման 3-րդ անձի՝ ծառայությունների մատուցման ընթացքում և դրանց ավարտից հետո:

13. Տարեկան տեխնիկական աջակցություն իրականացնող կազմակերպությանը պետք է ունենա "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման արտոնագրերի մատակարարման, ներդրման և տեխնիկական սպասարկման գործառույթներ իրականացնելու համար անհրաժեշտ իրավունքներ և հմտություններ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 27
ՀՎՀՀ 01544167
"Կոնվերս բանկ" ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100

Ն. Հարությունյան ------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոսերվինժեներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Շերամի փող 2. 1, բն. 3
ՀՎՀՀ 01305127
"Ինեկո բանկ" ՓԲԸ
Հ/Հ 2050422362451001

Ս. Կարապետյան ------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**Հավելված N 2**

*« 26 » 11 2025 թ. կնքված*
*ՀԿ-ԳՀԾՁԲ-25/03 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ եռամսյակների | | | | |
| | | | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. | **Ընդամենը** |
| 1 | 72261160 | *Առկա "АльфаЦЕНТР" ծրագրային ապահովման արտոնագրերի համար նախատեսված պարբեկան տեխնիկական աջակցության ծառայություն* | 0 | 0 | 0 | 5950000 | **5950000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Աբովյան 27
ՀՎՀՀ 01544167
“Կոնվերս բանկ” ՓԲԸ
Հ/Հ 1930000600150100

Ն. Հարությունյան -----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Պրոսերվինժեներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Շերամի փող 2. 1, բն. 3
ՀՎՀՀ 01305127
“Ինեկո բանկ” ՓԲԸ
Հ/Հ 2050422362451001

Ս. Կարապետյան -----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ